ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՌԻՄԱՋՆՈՐԴ ԲԱՐՁՐԱՊԱՏԻՎ Տ. ՎԱՀԱՆ ԾԱՅՐԱԳՈՒՆՆ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԻՐԱՆՈՒՄ

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՔԵՐԹԸ ԳՐՈՒՄ Է

Պարսկա-Հնդկաստանի Առաջնորդ բարձրաստիճան Վահան Ծայրագույն վարդապետ Կոստանյանը երեքշաբթի 15 փետրվարի կեսօրից հետո ժամի 3-ին ժամանեց Թեհրան։

Բարձրաստիճան Հայրը Ղալի Մորղիի օդանավակայանից առաջնորդվեց Ս. Աստվածածնի եկեղեցին ընկերակցությամբ կրոնական և հասարակական մարմինների ներկայացուցիչների։ Մուտքի դռան դիմավորելու եկավ կրոնական դասը։ Բակում շարքի կանգնած աշակերտությունը ծափահարություններով ողջունեց նրա մուտքը։ Հանդիսավոր «Հրաշափառ»—ով Առաջնորդ Հայրը առաջնորդվեց եկեղեցի, ուր և տվեց իր օրհնությունը ժողովրդին։

***

ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՌԻՄԱՋՆՈՐԴ ԲԱՐՁՐ. Տ. ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ» ՀԱՂՈՐԴՈՒՄ Է.

— Առջի օր մայրաքաղաք ժամանեց Իրանա-Հնդկաստանի Առաջնորդ Բարձրապատիվ Վահան Ծայրագույն վարդապետ Կոստանեան։

Երեկվա թվով համառոտակի տվինք ընդունելության տեղեկությունները։ Այստեղ մի քանի բառով անդրադառնանք Առաջնորդ Հոր օրհնության խոսքին։

Թեև օդանավից հոգնած և քիչ տկար, սակայն խիստ աշխույժ ու առոյգ ձայնով, համակրելի ու տպավորիչ արտահայտությամբ Առաջնորդ Հայրը պերճախոսորեն ողջունեց Ս. Աստուածածնի եկեղեցին համախմբված հոծ բազմությանը։

Նա ասաց, որ Ս. Էջմիածինը իր ավելի քան 1600 տարիների գոյությամբ կենսատու աղբյուրը և հզոր պաշտպանն է եղել հայ ժողովրդին ամենուր։ Այժմ էլ հայը, ուր էլ որ լինի, իր աչքը սևեռած հավատքով ու հույսով նայում է Ս. Էջմիածնին ու ապրում նրանով։ Ապա նա Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Տ. Գեվորգ արքեպիսկոպոս Զեորեքչյանի օրհնությունն ու ողջույնը տվեց ժողովրդին։

Նա հիմնովին հերքեց այն բոլոր անտեղի ասեկոսները, որ տարածվել էին Էջմիածնի մասին։

Նա Ազգընտիր Տեղակալի և իր երախտագիտական դնահատանքն ու օրհնանքը տվեց Իրանի Վեհապետին ու Կառավարությանը, որ իրենց հովանիի տակ հոգատար են եղել Իրանում հաստատված հայությանը հանդեպ։

Առաջնորդ Հայրը խոստացավ առաջիկա կիրակի մանրամասնորեն խոսել Ս. Էջմիածնի ներկա բարեհաջող կացության և Մայր Հայրենիքի կուլտուրական վերելքի մասին։

Եկեղեցում բարի դալուստ մաղթեց Համայնականի նախագահ ս. Պրոֆ. Հակոբյանը։

Ապա Առաջնորդ հայրը հասարակական մարմինների ներկայացուցիչների ընկերակցությամբ մեկնեց իր բնակարանը Հայ Ակումբի դրոշարանի վերնահարկը,



Տ. ՎԱՀԱՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ուբ պ. պ. Հ. Գարագաշ, Ս. Ավագյան, Ավ. Տեր Վարդանյան Արժ. Տ. Հովհ. քահանա Հաճյան, Տիկ. Ա. Մուսաելյան և պ. Տրդատ Բարսեղյան բարի գալուստի խոսք ասելով կրկին առիթն ունեցան լսելու Առաջնորդ Հոր շնորհակալիքը և մի շարք կրոնական և ազգային խնդիրների շուրջ բացատրություններ:

Մենք բարի գալուստ մաղթելով Իրանա-Հնդկաստանի մեր սիրելի Առաջնորդին մաղթում ենք կատարյալ հաջողություն վերակազմության իր բոլոր աշխատանքների մեջ:

(«Վերածնունդ» թիվ 35, փետր. 1945 թ.

***

ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԲԱՐՁՐԱՊԱՏԻՎ ՎԱՀԱՆ ԹԱՂԵՐԱԳՈՒՑՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈՍՏԱՆՑԵՑԸ ԻՐԱՆԻ ՃԱՀԻ ՄՈՏ

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԹԵՐԹԸ ՏԱԼԻՍ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

—Իրանա-Հնդկաստանի Առաջնորդ Բարձրապատիվ Վահան Ծայրագույն վարդապետ Կոստանյանը, ընկերակցությամբ պ. Իվանոֆ Խան Ղարախանյանի, Մարմարի պալատն ընդունվեցին Շաբաթ օր, ժամի 5-ին 10 մնացած, պալատական նախարար Ն. Գ. Պ. Ալաից:

Ն. Գ. Պ. Ալաի խոսք սիրալիր հյուրընկալումից հետո ճիշտ ժամի 5-ին պալատական նախարարը նրանց ներկայացրեց Ն. Կ. Վ. Շահնշահին կայսերական դրասենյակում:

Ն. Կ. Վ. Շահնշահը խոսք հարգալից և սիրալիր ընդունելության արժանացրեց Առաջնորդ Հորը, որը հանձնեց նրան Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալի կոնդակը, պարսկերեն թարգմանության հետ միասին:

Այս Առաջնորդ Հայրը կարդաց հետևյալ ճառը, որը թարգմանվեց Իվանոֆ Խան Ղարախանյանի կողմից պարսկերենի.

ՁԵՐԴ ԿԱՑՄԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ, ԱՐԵԳԱԿՆԱՓԱՑԼ ԱՐՔԱ:

Պատիվ ունիմ Ձերդ Կայսերական Մեծության մատուցանել Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ազգընտիր Տեղակալ Տ. Տ. Գեվորգ Արքեպիսկոպոսի Սրբատառ կոնդակը առ այն, որ նա ջերմաջերմ աղոթում է առ բարձրյալն Աստված, որ պահի Ձեզ հանդերձ Արքայական դերդաստանով իր հովանու ներքո երջանկության և բարօրության մեջ և Իրանյան ժողովրդին բարդվածման ու հառաջադիմության մեջ:

Ձերդ Կայս. Մեծություն, Հայ ազգը, երկար դարեր ապրել է Իրանում, նրա հավատարիմ զավակներն այնքան նվիրված են աշխատել Իրանական պետության համար, որ զանազան ժամանակներ նրանք պետական ապարատում վարել են խոսք բարձր պաշտոններ և արժանացել շահերի քաջալերանքին ու շնորհներին: Հայ ազգը իր հավատարիմ ու լոյալ քաղաքականությամբ շնորհով դրծոն դեր է կատարել Իրանյան ժողովրդի թե տնտեսական և թե քաղաքական ասպարեզում:

Ավելի մեծ հարգանք, սեր ու պաշտպանություն վայելել են սկսած Շահ Աբբաս թագավորի ժամանակներից մինչև Ձերդ Կ. Մ. երջանկահիշատակ Հոր Ռեզա Շահի և այժմ էլ Ձերդ Արեգակնափայլության օրոք: Միրում ենք հուսալ, որ Դուք, Տեր Արքա, որպես լուսամիտ մի

անձն, Ձեր հովանու ներքո կպաշտպանեք նրա դարավոր իրավունքները թե՛ կրոնի, թե՛ դպրոցական և թե կալվածական խնդիրներում:

Տեր Աբրա, թույլ տվեք առ ոտս Ձերդ Մեծության արկանել իմ հետևյալ ամենախոնարհ խնդիրը.

1. Բարեհաճել կարգադրել, որպեսզի Իրանի պետության մեջ գտնվող հայոց դպրոցների ամեն մի դասարանին հայոց լեզվի, գրականության, պատմության և կրոնի դասավանդման համար հատկացվի շաբաթական 10—12 ժամ: Չնայած այս մասին ժամանակին կարգադրություն եղել է, սակայն կյանքի մեջ շատ տեղերում կիրառված չէ:

2. Վերադարձվեն հայոց դպրոցական շենքերն ու կալվածները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ազգնուիր Տեղակալ Ամենապատիվ Տ. Տ. Գևորգ Արքեպիսկոպոսի կողմից օրհնելով Կայսերական Մեծությանն ու Ձերդ Արեղակնափայլության Արքայական Գերդաստանին ցանկանում եմ Ձեզ երկար կյանք ի փառս և ի շահ Իրանյան պետության, այլև պատմական դարավոր կուլտուրա ունեցող Իրանի ժողովրդին հարատևություն, քաղաքական, տնտեսական ու կուլտուրական վերելք: Ամեն:

Ճառի թարգմանությունն ունկնդրելուց հետո Վեհապետը հայտարարեց.

— Ասացեք Խալիֆային, որ լսեցի բոլորը ամենայն ուշադրությամբ: Խորին շնորհակալություն եմ հայտնում Մեծ Խալիֆային իր օրհնությունների և ողջույնների համար: Ձեր խնդիրը մանրամասնորեն դրավոր ներկայացրեք պալատական նախարարին և ես կկարգադրեմ անհրաժեշտը: Հայ ազգը ինչպես իմ նախորդներից, նույնպես և իմ օրոք բարձր պաշտոնների տեր է պետական ապարատում և ես գոհ եմ նրանցից: Հայ ազգին ես հարգել եմ և հարգում եմ և այսուհետև նույն հոգատարությունը կունենամ նրա հանդեպ:

Առաջնորդ Հայրը իր խոսակցության մեջ հիշեց, որ Շահ Աբբասը եղել է Ս. Էջմիածնում: Վեհապետն այդ առթիվ ասաց.

— Երբ ես Եվրոպա պտույտի գամ, անպայման կայցելեմ Մեծ Խալիֆային Ուչ Քիլիսայում:

Առաջնորդ Հայրը այս առթիվ իր խնդակցությունը հայտնելով շեջտել է.

— Մեծ Խալիֆան և Հայ Ազգը հրճվանք և սրտատրոփ Ձեզ կսպասեն: Խնդրում եմ նրանց երջանկացնեք Ձեր այցելությամբ:

Թեյի հյուրասիրվելուց հետո, հրաժեշտի պահուն Առաջնորդ Հայրն ասաց.

— Տեր Աբրա, այսօր Հայ ազգի և ինձ համար անմոռանալի և հրճվանքի օր է, որովհետև Ձերդ Կայսերական Մեծությունը բարեհաճեց ուշադրության առնելով իմ խնդիրը կարգադրություն անել այդ առթիվ:

Երբ մենք ներկայացանք Առաջնորդ Հոր, տեղեկանալու համար այս բոլորը, նա մեզ հայտարարեց, որ ինք անսահման շնորհակալ է մնացել Կայսերական այս սիրալիր ունկնդրությունից:

(«Վերածնունդ», թիվ 50, մարտ, 1945.)

ԻՐԱՆԸ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ԹԵՀՐԱՆՈՒՄ

Այս վերնագրով հոդվածի մեջ «Վերածնունդ»-ը հաղորդում է հետևյալը.

— Ուրախ ենք հայտնելու, որ Իրանա-Հնդկաստանի արժանավոր Առաջնորդ բարձրապատիվ Վահան Ծայրագույն վարդապետ Կոստանյան Թեհրան ժամանելուց անմիջապես հետո գործի անցավ:

Թեմականի նախապատրաստական անձնակազմի, որի մասն է կազմում նաև Համայնական դիվանը, առաջին նիստին

Առաջնորդ Հայրը կարդաց Ամենայն Հայոց Հայրապետության պատգամը, որով թույլատրվում էր Թեհրանի և իր շրջականների ստեղծվելիք թեմի համար ժամանակավոր առաջնորդ ընտրել։ Սակայն, հետ խորհրդակցության, տեղվույս վերոհիշյալ մարմինը նպատակահարմար գտավ ժամանակավոր առաջնորդ չունենալ, նոր բարդություններ և դժվարություններ չստեղծելու համար ապագային և միաձայնորեն որոշեց մինչև ընտրությունների վերջանալը և Պատգամավորական ժողովի կատարելիք առաջնորդական ընտրությունը բարձրապատիվ Վահան ծայրագույն Վարդապետ Կոստանյանին ճանաչել նաև Թեհրանի թեմի առաջնորդ։ Այս առթիվ նույնիմաստ մի հեռագիր հասցեագրվեց նաև Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր Տեղակալին և խնդրվեց նրա համաձայնությունը։

Հետագա նիստում Իրանա-Հնդկաստանի Առաջնորդ Բարձրապատիվ Վահան ծայրագույն Վարդապետ Կոստանյանը, թեմական անձնախմբերը և տեղվույս Համայնական ամբողջական մարմինը իր տեղեկություններով հայտարարեց ժամանակավոր Թեմական Մարմին, որը պիտի վարե հարաբերական գործերը համաձայն տեղումս մշակած և Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալից վավերացված կանոնագրի, մինչև Թեմական Մարմնի ընտրությունը։

Անմիջականորեն շտապեցնելու համար այդ ընտրությունը Առաջնորդ Հոր նախագահությամբ ընտրվեց 7 հոգուց բաղկացած ընտրական մի հանձնախումբ, որը գործի է անցել և ամենաուշը մինչև մարտ ամիս լրացնելու է Մայրաքաղաքիս համայնքի վիճակագրությունը։ Հավանական է, որ ընտրությունները կատարվեն մինչև երկու ամիս։

Առաջնորդ Հայրը տեղի ունեցած նիստերում հայտարարեց, որ Ամենայն Հայոց Հայրապետության Կաթողիկոսական ընտրությունը տեղի է ունենալու առաջիկա մայիսին, ուստի և պետք է շտապեցնել Սիջմիածին առաքվելիք պատգամավորների ընտրությունը։

Վերջին անգամ կարդացվեց Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալի հեռագիրը հասցեագրված Առաջնորդ Հոր հետևյալ պարունակությամբ.—

«Ազգային Կրոնական Խորհուրդը կը բացվի ճիշտ 20 մայիսին։ Շտապեցրեք պատգամավորների ընտրությունը համաձայն ձեզ առաքված հեռագրի։ Հաղորդեցեք պահանջված տեղեկությունները եպիսկոպոսների վերաբերմամբ»։

Այս խնդրով զբաղվելու է Թեմականը նախ քան Առաջնորդ Հոր Նոր-Ջուղա մեկնելը։

(«Վերածնունդ», թիվ 49, մարտ, 1945)

ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԲԱՐՁՐ. Ց. ՎԱՀԱՆ ԾԱՅՐԱԳՈՒՆՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՋԵԿՈՒՅՑՈՒՄԸ ԹԵՎՐԻԶՈՒՄ

Փետրվարի 1-ին Թավրիզի Հ. Կ. Մխիթյան սրահում հոծ բազմության ներկայությամբ խոսել է Իրանա-Հնդկաստանի Թեմի Առաջնորդ Գերապատիվ Վահան ծայրագույն Վարդապետ Կոստանյանը։ Անդրադարձել է «Էջմիածին» հանդեսին, Գեվորգյան ճեմարանին, վանքի նորոգություններին, Սովետական Հայաստանի կուլտուրական առաջադիմության և շեշտել է, որ Հայաստանը այս պատերազմի ընթացքում ոտնակոխ չի եղել շնորհիվ Սովետական Միության ժողովուրդների եղբայրության և՝ նրանց Մեծ Առաջնորդ մարաջախտ ՍՏԱԼԻՆԻՆ։

(«Վերածնունդ», թիվ 33, փետրվար, 1945)